

# Գ Ո Ւ Թ Ա Ն

Հ Ա Ն Դ Է Ս

Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն, Գ Ի Տ Ա Կ Ա Ն, Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ա Կ Ա Ն

Պ Ա Տ Կ Ե Բ Ե Բ Ո Վ

Հ Ո Վ Ա Ն Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

Պ. Է. ՏԻԻՔԼՕՒ

Տնօրեն Էնսիքիս Բարսիկոնի եւ ակադեմիայի Էնսիքիս սր Ծրանսի

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Բ - Տ Է Ո Ր Է Ն

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Գ. Մ Ե Ծ Ա Տ Ո Ւ Բ Ե Ա Ն

Բ Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

Բ Օ Լ Ժ Է Ր Է

## COÜTAN

REVUE D'AGRICULTURE, SCIENCES ET ARTS

SOUS LE PATRONAGE DE

M. E. DUCLAUX

Directeur de l'Institut Pasteur, membre de  
l'Institut de France

Directeur :

K. MÉDZADOURIAN, Ingénieur-Agronome

SÉCRÉTAIRE

PAUL GÉRÉE, Ingenieur-Agronome

PARIS

Յուլիս 23ի Արևելիցը ազգային լուսերու բաժնին մէջ  
կը գրէ:

«Այսօրուան թուրք թերթերու մէջ կը կարգանք թէ՛  
Բարիզի Օսմ. դեսպանը Հանրօգուտ շինութեանց նախա-  
րարութեան զրկեր է Բարիզի մէջ Գ. Մեծատուրեան էֆ. ի  
Գուրան երկրագործական հանգէսը՝ յարելով, որ այդ հրա-  
տարակութիւնը Բարիզի Բասդէօնեան Հաստատութեան  
(Institut Pasteur) հովանաւորութեան ներքեւ կը գտնուի»:

Մեզ դիմողներուն. — «Գութան»ը մուտք ունի ամէն եր-  
կիր, ինչպէս Օսմանեան Կայսրութեան բոլոր երկիրները:

Կը նուիրեն մեկ տարեկան «Գուրան»

Կ. Պոլսէն. Կեր. Տիբայր վարդապետ, Օվածըզ գիւղի  
Ազգ. ընթերցարանին:

Բարիզէն. — Հոտի պարսկ. դեսպան բարձր. Մելքոն  
խան՝ Թէհրանի Ազգ. վարժարաններուն:

Իզմիրէն. — Լեւոն էֆէնի Մկրտիչեան, Մուշի Սուրբ  
Կարապետի վանքին:

Բարիզէն. — Տիգրան խան Բէլէկեան, Կեսարիոյ առաջ-  
նորդարանի:

Իզմիրէն. — Պ. Նէսար, տեղւոյն Ազգային ուրբանոցին:

Նշանակուած են Գործակալ

Թիֆլիսի պ. Գ. Գալուստեան, Կիւթէմբէրի գրավա-  
ճառանոցում:

Թրիպոլիի պ. Սիրական Յ. Գըլըճեան:

Գարթալի. պ. Առաքել Պ. Չօլաքեան:

Մեր բաժանորդներէն կը խնդրուի, որ իրենց բաժնե-  
գները յանձնեն իրենց տեղի պ. գործակալին կամ մեզ  
զրկեն ուղղակի եւ անյայտ:

Ստիպուած այսուհետեւ անպատասխանի պիտի թողունք  
բոլոր այն նամակներն ու յանձնարարութիւնները, որոնք  
եթէ կանխիկ մեզ զբկած չըլլան պատասխանի եւ յանձ-  
նարարութեան համար ըլլալիք ծախսերը:

Բենիկայ. պ. Պարսամեան, — Օձի խայթուած քի դարմանը  
պիտի գտնէք յառաջիկայ թուին մէջ:

Պ. Ք. եւ Մ. Ե. Սիվազ. — Պէտք է գիտնալ, որ իւրա-  
քանչիւր յանձնարարութիւն կատարելու համար, մի քանի  
ֆրանք պէտք է ծախսել, մեր միջոցները չեն ներեր, տարին  
մի քանի հազար ֆրանք տրամադրել, այլ եւ այլ նամակա-  
գրերու. որ մը, եթէ ճամբաս ընկնի այդ գործարաններու  
կողմէրը, սիրով կը կատարենք ձեր յանձնարարութիւնը՝  
ձեզ ծառայութիւն մը մատուցած ըլլալու համար:

Յանձնարարութեան համար մեզ զիմոզ բաժանորդները,  
պէտք է կատարեն իրենց յանձնարարութիւնը տեղւոյն  
պ. գործակալին միջոցով:

## Կ Տ Ա Կ Ը

1894ին՝ Կովկասի մէջ, մասնակի սովէ մը ազդուած, «Ակնարկներ» վերնագրով յօդուած մը գրեցի «Տարագ»ին ցոյց տալով գաղթելու պատճառները եւ սովերու առաջըը առնելու էական միջոցները:

Այդ յօդուածէն մաս մը կ'արտատպենք «Գուրան»ի մէջ, որ կը խօսի մեր մէջ եղած կտակներու վրայ եւ մեր կտակարարներու հայեացքները կը ներկայացնէ:

\* \*

«Սովելոց համար եղած զոհարերութեան մի մասնիկը բաւական է ապագայ սովերու առջեւ այժմէն անանցանելի պատուարներ քաշել:»

«Մեր բնագաւառը առատ եւ ճոխ բնութեամբ օժտուած երկիր մ'է, որ երբեք աւերող սովին զոհ չի պիտի ըլլայ, եթէ միայն երկրի այդքան նպաստաւոր պայմաններէն օգուտ քաղուի:»

«Հողային ճարտարութեանց նախնական ծանօթութիւնները միայն բաւական պիտի ըլլան այս ժողովրդի ներկան բարելաւել, իսկ ապագան ապահովել:»

\* \*

### Շարունակենք .

«Մեր մէջ ալ հիմա նորածեղութեանց կարգը անցած են, կտակները, բայց կը պահեն տակաւին հին օրերու ձեւը, օրը նոր՝ կտակը նոր է. բարեգործ մարդիկ կուտան միշտ, բայց որով. — միշտ ժամին ու դպրոցին, հիւանդանոցին ու կուսանոցին, վարդապետին ու դպրին, ժամկոչին ու տէրտէրի դանձանակին, արժանին ու անարժանին, կարօտին ու անկարօտին. միայն մեր գիւղացին եւ մեր հողագործութիւնը բաժին չունին այդ կտակներէն:»

«Հազար անգամ մեծ ու առաքինի գործ մը պիտի նըկատուի յանուն գիւղացի մանկտւոյն եւ գիւղական դպտիարակութեան համար եղած կտակները, որոնց շնորհիւ

սովերը կը վերնան, երկիրը կը շէննայ, գիւղացի տղան ալ կրթուելով՝ հողին ու հողագործութեան ճաշակը կը ստանայ ու կը շարունակէ այն ատեն հօրը գործը եւ շէն կը պահէ պապին օճախը» :

«Անմոռաց պիտի մնայ, մեզ համար, այն մարդը, որ առաջին անգամ մտածէ մեր արդի տնտեսական դրութեան վրայ եւ իբր դարման ներկայ վիճակին՝ հաստատէ ճարտարագիտական ուսումնարան մը, ուր ուսուցուին հողագործութիւն, կենդանաբուծութիւն, գինեգործութիւն, մեղուաբուծութիւն, պանրագործութիւն, գիւղատնտեսութիւն, վերջապէս երկրի պէտքերուն համապատասխանող գիտութիւններ» :

Ութը տարի վերջը, մեզ համար երազելի մարդը կ'երևի, յանձին Պագուցի Պ. Լութֆիկ Յարութիւնեան Սարգիսեանցի, որ գումար մըն ալ տրամադրած է իր կրտակով՝ ճարտարագիտական կամ հողագործական վարժարան մը բանալու համար :

Չենք կրնար կանգ չ'առնել եւ չի խորհրդածել այդ օգտակար գաղափարին առաջ, որ տարիներով խօսած եւ գրած ենք :

Պ. Յարութիւնեան, եթէ իր կենդանութեանը, հողագործական յառաջգիմութեան յատկացուած գումարի քանակը ճշգէ եւ իր կենդանութեանը մարմնացում տայ իր գեղեցիկ որոշումին, աւելի մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլայ, մանաւանդ այս միջոցին՝ երբ պէտք ունինք հողագործական գիտութեանց ժողովրդանալուն :

Պ. Յարութիւնեանի ձեռնարկի փութացումովը՝ թէ՛ ժամանակ չանած պիտի ըլլայ ժողովուրդը, թէ՛ դրական օրինակ մը տրուած պիտի ըլլայ ուրիշ բարեգործ անձանց, որոնք իրենց կողմէն պիտի փութան կարեւոր գումարներով, սխտուած գործը խանձարուրէն հանել, միծցնել եւ սարածել երկրի զանազան կողմերը :

Հողագործներու ուշադրութիւնը կը հրաւիրենք այս կտակին վրայ, որպէս զի մեզ հետ դիմեն Պ. Յարութիւնեան Սարգիսեանցի եւ կտակի գործադրութիւնը խնդրեն :

Պատեհ առիթն է կարծեմ, որ լրագրութիւնը իր ճայ-  
նը բարձրացնէ եւ մեր հարուստները համոզէ, որ մաս-  
նակցելով այս գաղափարին, Սարգիսեանց կտակը անեցնեն,  
որով փոխանակ սեղմուած գործի մը՝ դպրոցի մը,  
հիմնենք միացեալ ոյժերով մեր հողագործական հաստա-  
տութիւնները, քրքրենք մեր հողագործական անցնալը եւ  
հաստատենք զայն, որ մեզ այնքան պատիւ կը բերէ,  
որքան մեր գրականութիւնը եւ տոհմային պատմութիւնը:  
Իսկ ատկից ալ աւելին՝ ստեղծած կ'ըլլանք է՛ն կարեւոր  
հաստատութիւնները, ուրկից գուրս ելլողները մեր օրա-  
կան կեանքով՝ հացի խնդրով պիտի գրադին եւ անչուշտ  
պիտի բարելաւեն զայն: Ըսած են թէ՛ գաւաթ մը պաղ  
ջուր խմցնողին վարձքը չի կորսուիր, իսկ անօթի ժողո-  
վուրդի մը հաց մատակարարողին վարձքը կը կորսուի՝  
միթէ:

Գ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

## Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն

### Հ Ո Ղ Ն Բ Ը Ը Ա Ն Չ Ն Ա Ղ

Հողերու բնութիւնները կը ճանչցուին զանազան մի-  
ջոցներով: Քիմիական լուծումով հողի գաղտնիքին կրնայ  
տիրանալ հողագործը, բայց պէտք է դիտուն ըլլայ կամ  
լուծել տալու նիւթական միջոցներ ունենայ:

Երկրաբաններն ալ կը ճանչնան հողը, բայց ամէն  
մարդ երկրաբանական հմտութիւն չի կրնար ունենալ. —  
կայ ուրիշ միջոց մ'ալ՝ հողի վրայ աճած բոյսերէն հետեւ-  
ցնել հողի բնութիւնը, այս ալ այն անպատեհութիւնը  
ունի, որ հողագործերէն շատերը չեն ճանչնար վայրենի  
բոյսերը կամ անոնցմէ շատ քիչերը կը ճանչնան:

Նորերս չորրորդ միջոց մ'ալ ստեղծուեցաւ՝ հիմնուած  
չօշափելիքի, լսողութեան, հոտոտելիքի եւ տեսողու-

Թեան վրայ, թէ եւ այս վերջինը քիփականի բացարձակ ճշդութիւնը չունի, այնուհանդերձ՝ կրնայ գործնական ծառայութիւն մատուցանել հողագործին :

Սկսինք շոշափելիքէն, ձեռքով հող առէք եւ ճզմեցէք, եթէ կարծր ու կոպճուտ է, հաստատ նշան է, որ կը պարունակէ բաւական մեծ քանակութեամբ աւազ. ընդհակառակը՝ եթէ կակուղ եւ խմորի պէս է, նշան է թէ քիչ աւազ կը պարունակէ, վերջապէս՝ եթէ հողը պարարտ եւ իւզոտ աղղեցութիւն մը թողու ձեռաց վրայ՝ ըսել է թէ կաւային է. եթէ քանի մը հողեր ուզուի իրարու հետ բաղդատել՝ անհրաժեշտ է որ իւրաքանչիւրը միեւնոյն աստիճանի խոնաւութիւնը ունենայ :

Լսողութիւնով ալ կը ճանչցուի. պտղուց մը հող ակառանբու միջեւ դնելով կամ պնակի մը վրայ ճզմելով՝ եթէ խշրտալու ձայներ հանէ՝ նշան է որ աւազուտ հող մ'է :

Կաւային հողերը հոտոտելիքով դիւրաւ կը ճանչցուին. կաւը ըլլայ չոր կամ թաց՝ հողի մասնաւոր հոտ մը ունի, հերիք է ուրեմն հողի գուղձ մը փխրել եւ հոտոտել, եթէ այդ մասնաւոր հոտը առնէք՝ կաւային է հողերնիտ, եթէ հոտ չառնէք՝ հողերնիտ կրային կամ դայլախազային է :

Աչքերով ալ կրնան ճանչցուիլ հողերը, եթէ խոնաւօղի ժամանակ վարէք եւ հողը գութանի խոփին փակչի կամ ցաքանի ակառանբուն՝ գիտցէք որ՝ կաւային է հողերնիտ : Քանի նուազ կպչուն ըլլայ հողը այնքան շատ աւազ, կիր եւ բուսահող կը պարունակէ : Առերը եթէ փայլին, չի փշրին, հողերնիտ ուժով եւ կաւային է, հետեւաբար ջուրերը երեսը կը մնան, պէտք է ուրեմն ըստորերկրեայ կորիներ շինել գետինը չորցնելու համար : Ջուրերը եթէ կը ծծուին, ըսել է թէ՝ հողը քիչ կաւ, շատ աւազ ու կիր կը պարունակէ. եթէ ճերմակ են հողերը կը պարունակեն կիր եւ գաճ, դեղինները կը պարունակեն երկաթ կամ կաւ, եթէ սեւ է կը պարունակէ բուսահող :

Երկարատեւ երաշտներու ժամանակ կաւային հողերը կը ճեղքրտին եւ կը պատուտին, մինչդեռ աւազայինները իրենց վիճակը չեն փոխեր :

Կրի գոյութիւնը հաստատելու համար ամենապարզ միջոց մը կայ, բարկ քացախ եթէ լեցնէք հողին վրայ պղպղակներ կը գոյանան՝ շատ կամ քիչ՝ կրի քանակու-

թեան համեմատ՝ եթէ պղպջակներ չի գոյանան, ըսել է թէ կիր չի պարունակեր քննութեան ենթարկուած հողը :

Մեր այս ցոյց տուած միջոցները թէ եւ պարզ են, բայց ասոնցմով պիտի հասկցուին բարդ խնդիրները :

Հողերու տարրազիտական տարրերը դոնէ որակական տեղակէտով ճանչնալու համար պէտք չեն աշխատանոցներ, ոչ ալ սուղ գործիքներ, մէկ կողմէն գոց քանի մը ապակեայ խողովակներ եւ քանի մը հակազդակներ (ռեաֆրիլ) բաւական են :

Գիտնալու համար թէ՛ սեւ հող մը բուսահող կը պապարունակէ (որովհետեւ ուրիշ նիւթեր ալ կրնան հողերու սեւութեան պատճառ ըլլալ) . պտղուց մը հող եփելու է բօղաս (potasse) կամ այրող կալաքար (soude caustique)ի հետ, յետոյ քամելու է կամ թուղթի վրայ լեցնելով կամ նուրբ կտաւի, քամուածը յտակ հեղուկ մը կ'ըլլայ, բայց այնքան թուի՝ որքան շատ է բուսահողի քանակը :

Վերջապէս հողի մը պարունակած գործարանական բուրակածնին (azote organique) վրայ գաղափար մը ունենալու համար, պէտք է քանի մը կրամ հող առնել չորցնել փուռի մէջ, խստնել նոյն քանակութեամբ կալաքարեալ կրի (chaux saudé) եւ այս խստնուողը լեցնել հողէ ամանի մը մէջ, օրինակ լիւլէի մը եւ կարմրելու աստիճան տաքցնել, եթէ անուշադրի (նիշեսիւր ռուհի) հոտեր արձակէ, որ հոտոտելիքը խկոյն կը զգայ, նշան մ'է, որ բորակածին կը պարունակէ, որովհետեւ գործարանաւոր բորակածինը կրի եւ կալաքարի հետ տաքցուելով անուշադրի կը ձեւափոխուի :

Կիրն ալ պարզ փորձով մը կը ճանչցուի, առէք 10 կրամ չորցած հող եւ մանրելով զրէք գաւաթի մը մէջ, միեւնոյն ծանրութեամբ ալ անձրեւի ջուր, կաթիլ կաթիլ ալ լցէք քլօրական թթու (acide chlorhydrique) մինչեւ որ ալ պղպջակներ չարձակէ, յետոյ գաւաթի բոլոր պարունակածը կործնէք ծալուած թղթէ քամոցի մը վրայ, յտակ հեղուկ մը տակը կ'անցնի եւ հողային մասերը թուղթին երեսը կը մնան . փուռի մէջ չորցնելով, կշռելով եւ թուղթ-քամոցի ծանրութիւնը հանելով կ'ունենանք կրի քանակութիւնը :

Վերջապէս պարզ եղանակ մ'ալ կայ լուսածնական

Թթուի (acide phosphorique) գոյութիւնը հաստատելու համար, առնել 10 կրամ չոր հող, դնել ամանի մը մէջ եւ հետը խառնել 10 կրամ բորածնական թթու (acide nitrique), քամագոլ (ոչ բարկ) կրակի վրայ շոգիացնել, ամանին մէջ մնացած չոր մնացորդին խառնել հաւասար քանակութեամբ անձրեւի ջուր եւ բորածնական թթու. քանի մը վայրկեան ալ տաքցնել եւ քամել, ստացուած յտակ հեղուկին մէջ լեցնել մի քանի հարիւրորդ խորանարդ անուշադրի մոլիպտատի (molibdate d'ammoniaque) լուծուածք, որով կը շոգի հեղուկին տակը, յտակ, գեղեցիկ դեղին նիւթ մը այնքան առատ՝ որքան շատ քանակութեամբ եղած ըլլայ հողի պարունակած լուսածնական թթուն:

2. ՏԻԻՔԼՕ

### ՑԱՔԱՆՆԵԼ ԵՒ ԼՈՂՆԵԼ

#### Ց Ա Ք Ա Ն

Գութանի պակաս թողած աշխատութիւնը ցաքանը կ'ամբողջացնէ. ցաքանը հողը կը քրքրէ եւ կը փխրէ, գէշ խտտիւրը արմատախիլ ընելով կը հաւաքէ. բայց իր գլխաւոր նպատակն է սերմերը ու աղբերը թաղել եւ հողը գուրել:

Ցաքանը կարելոր դեր մը կը խաղայ վերհողելու բոյսերու ոտքերը, որոնց հողը ձմրան սառնամանիքները խախտած կ'ըլլան, մարգերու ալ գուղձերը կը հաւաքէ: Բազմազիմի նպատակներ ունի, որոնց հասնելու համար, ճշգրտութեամբ եւ իննամով պէտք է կիրարկուի: Եթէ նպատակը ծածկել է, երեսք պէտք է ցաքանել, որպէս զի սերմերը խորունկ չի թաղուին, ասոր համար ամենաթեթեւ օձաձիգ (գիկ գակ) ցաքաններ անհրաժեշտ են, իսկ եթէ ուժով եւ խոշոր գուղձեր փշրել է՝ ամենածանր ցաքաններ պէտք են եւ կամ թեթեւները ծանրացնել անոնց վրայ քարերու կտորներ դնելով, այս պարագային ալ, եթէ գուղձերը չի մանրուին՝ կարելի է ցաքանել մօտ ակ-

ուաներ ունեցող ցաքաններով: Նոր հերկուած արտ մը ցաքանելու է ահօսամիջերու ուղղութեան ուղղահայեաց կերպով, բայց եթէ արտը վարուած է հողագօտիներու ձեւով, անոնց կատարները չ'աւրուելու համար, երբեմն մէկ՝ երբեմն միւս կողմէն՝ անոնց ուղղութեանը պէտք է հետեւիլ:

Արտի մը փոքր մէկ մասը կը ցաքանուի զառիվայրին ուղղահայեաց կերպով, այսպիսով լուծքը կը պտըտի հորիզոնականին վրայ, եղած ճիգերը անփոփոխ կը մնան. մինչդեռ հակառակը պիտի պատահէր, եթէ զառիվայրին ուղղահայեաց չաշխատուէր: Արտի ծայրը հասնելէ ետքը, եթէ փորձուի կենդանիները իսկոյն դարձնել, կրնայ պատահիլ, որ ցաքանը դառնայ եւ անոր ակունները վիրաւորեն կենդանիները, ասոր համար պէտք է կոր ճամբայ մը ընել. եթէ արտը շատ զառիվայր է, մշակը պարան մը կը կապէ ցաքանի անկիւնը ինքն ալ վերի կողմէն կը հետեւի, որպէս զի չի կրնայ դառնալ:

Գէշ եւ փնտասկար խոտերը հաւաքելու նպատակով ցաքանուած ժամանակ, երբեմն երբեմն ցաքանը պէտք է հողէն կտրել, որպէս զի գործիքին տակ փակուած խոտերը չարգիլեն աշխատութիւնը. մշակն ալ մէկ կողմէն արտին երեսը դիզուած խոտերը պէտք է հաւաքէ:

### Լ Ո Ղ

Ցաքանի պակաս թողած աշխատութիւնն ալ կրնայ լրացուիլ լողելով, որով հողը կը փշրուի, կը դուրուի, ամենափոքրիկ հատիկները կը թաղուին, լողելով կը ճզմուին միջատները, կը ճնշուի եւ կը կոխուի հողը: Թեթեւ, աւազային եւ կրային հողերը բաւական միայարութիւն չունին, լողելը այս հողերու հիւլէները իրարու մօտեցնելով եւ իրարու սեղմելով, անոնց բնագիտական վատ յակութիւնները կը բարելաւ է:

Ճնշումը կաւային հողերը զօրեղ կերպով կը բարեփոխէ, որովհետեւ հողի եւ ենթահողի միջեւ եղած յարաբերութեան տեւականութիւնը կը հաստատէ. լողելը ենթահողի եւ հողի մէջ եղած ճղքուածներն ու ծակախփները իրարու կը մօտեցնէ, ուրկից աւելի դիւրութեամբ կրնայ դուրս ելլել շոգիացմամբ, կրային հողերու մէջ առատօրէն գտնուած, ջուրերու մէկ մասը: Լողերը իրենց ծանրութիւ-

նով եւ մակերեւութին վրայ եղած ակոսներով հողը կը ճնշեն ու կը փշրին. ամենէն ծանրերը՝ ամենէն աղէկ կը ծառայեն նպատակին. հիմա գրեթէ ամէն երկիրներու մէջ կը լողեն հողերը. թեթեւ հողերը լողելով իրենց խոնաւութիւնը կը պահեն, որովհետեւ ջուրի շոգիացումը կ'արգիլուի հողի մասնիկներու իրարու մօտենալովը եւ ծակտիքներու զոցուելովը: Աւազուտ հողերու հատիկներու միջեւ եղած ծակտիքները աւելի խոշոր ըլլալով՝ օդը կը թափանցէ անոնց մէջ եւ կը չորցնէ, լողուելով այդ ծակտիքները շատ կը փոքրանան եւ հազիւ անզգալի շոգիացումը տեղի կ'ունենայ:

Կաւային հողերու մասնիկները նուրբ են. լողուելով կը կազմեն մազանման խողովակներ, ուրկից՝ գետնի տակի ջուրերը կրնան շոգիանալ. այս տեսակ հողերը պէտք է լողել չոր եղած ժամանակ, հողերու խաղացած (խախտած) ատենն ալ քոյելը անհրաժեշտ է, բոյսերու ոտքի վրայէն հեռացած հողերը իրենց տեղը դնելու համար:


Գարունը՝ կաւակրային հողերու բոյսերու արմատները կը բացուին երկրի կրած շարժումներէն, լողելով խախտած հողը իր տեղը կը գրուի, արմատները դարձեալ կը ծածկուին եւ չորնալէ կ'ազատին:

Ցաքանելէ ետքը ցանելու է. այնքան երեսք պէտք է ցաքանել՝ որքան սերմի հատիկները պզտիկ ըլլան, եթէ ցաքանելէ վերջը չի մանրած գուղձեր մնան արտին երեսք, լողելը կը մանրէ անոնք եւ սերմը պէտք եղած խորութեամբ կը ծածկէ:

ԼԷՕՆ ՊԻԻՍԱՐ

Brookline

ՎԵՐՍԱՅԼԻ ՊԱՐՏԻԶՊԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ



## ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

## ՁԷԹԻ ՄԱՍԻՆ

Շատ զժուար է գտնել այնպիսի ձէթ, որ ունենայ իսկ սերմի համը, որից նա ստացուած է: Սորա պատճառը այն է, որ սերմի աղուածքը աղում են զանազան տեսակ գործուածքների մէջ, որոնք միշտ առանձին մի համ են տալիս ձէթին: Ձէթը համը փոխում է եւ այն ժամանակ, երբ նրան քուսպից (ֆիւսպի) եւ այլ աղբերից իստակում են քամելով, կամ պարզեցնելու համար քիմիական նիւթեր են խառնում հետը: Այն ինչ կարելի է ուղղակի ստանալ շատ համեղ եւ բաւականին իստակ ձէթ: Դրա համար հարկաւոր է սերմի աղուածքը սեղմել ձիու, եզան, կովի կամ այծի երկար մազերից գործուածքի մէջ: Այս գործուածքը պէտք է լինի շատ խիտ (սըխ) եւ շատ հաստ (1 Յ[8 սանտիմետր գիւմի 1/4 վերջօկի): Երբ ձէթը անցնում է այդպիսի մի մազէ գործուածքի մէջով, այն ժամանակ միայն նա կողմնակի, օտար եւ վատ համ չէ ստանում եւ լինում է պարզ ու բնական: Եթէ ձէթը սերմի տաքացրած աղուածքից է հանւում, այն ժամանակ հարկաւոր է ունենալ այնպիսի մի աման, որ յարմարեցրած լինի գոլորշիով կամ ջրով տաքացնելու համար, այսինքն երկու տականի (bain marie), ջրեփ, որ եռացրած ջուրը կամ գոլորշին բաժանի կրակը աղուածքից: Եթէ անմիջապէս ամանի տակին է կըրակը լինում, կամ ամանը կրակից բաժանում է մէկ ուրիշ (չուքունէ) թափձուէ կամ երկաթէ տախտակ, այն ժամանակ ձէթը նմանապէս փոխում է իրա համը եւ գոյնը:

Գոլորշիով կամ ջրով տաքացրած եւ մազէ գործուածքի մէջով անցրած ձէթի համը աւելի քաղցր է լինում քան թէ առանց տաքացնելու, միայն սովորական կերպով ըստացած ձէթի համը:

Ձէթն ալ աւելի լաւ է մտում նեղբերան ամանի մէջ, մի երկու երեք տակ (խաթ) քթանով ծածկած ու կապած, քան թէ խցանով (մանթար) ամրացած:

ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆ

## ԳԻՒՂԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

### ԳԻՒՂԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

(Օղ, հող եւ քանկութիւն գիւղերու մեջ)

1. — Քաղաքային քաղմտնոծութեան քաղաքայինը. — Գիւղաբնակ դասակարգէն աւելի ուշադրութեան արժանի դաս մը չկայ. գիւղաբնակները Եւրոպայի եւ գրեթէ բոլոր աշխարհի ընդհանուր բազմամարդութեան ամենէն մեծ մասը կը կազմեն: Ժողովրդի արմատը կազմող գիւղական հասարակութիւնը իր հողին փարած, պանդխտութեան՝ մարդկային ուժասպառութեան այս որդին՝ իրեն պատճառած կորուստներուն հակառակ, շփումներէ հեռու, մի քանի առանձնացած վայրերու մէջ իր միեւնոյն բնաւորութիւնը, վարքն ու բարքը պահպանելով, ցեղային տեսակէտով անբաղդատելի կերպով բարձր սրբութիւն մը ունի քաղաքներուն վրայ, որոնք ամէն տեսակ խառնուրդ մը ներկայացնելով, կեանքի զէպքերուն եւ պայմաններուն հետ շարունակ փոփոխութեան կ'ենթարկուին:

Հետեւեալ քաղաքային եւ գիւղական քաղմտնոծութեան գուզադիր ցուցակը յիշուած երկիրներէն ամէն մէկուն քաղաքներու բազմամարդութեան՝ գիւղերու բազմամարդութեան հետ ունեցած համեմատութիւնը ցոյց կուտայ:

Երկիրներ	100 բը-	100 բնակչի վրայ կը	Գիւղերու մէջ
	նակչի վրայ տարեկան միջին մահաթիւ	գտնուին	
	Քաղաքներու մէջ	Գիւղերու մէջ	
Սադոսնիա	2,87	66,15	33,85
Անգլիա եւ Կալէսի երկիր	2,20	53	47
Պելճիգա	2,32	45,05	54,95
Հօլանտա	2,49	39,51	60,41
Գերմանիա	2,71	39	61
Սկովտիա	2,21	38	62

Ֆրանսա	2,40	33,50	66,50
Բոլոնիա		32	68
Իտալիա	2,99	31,30	68,70
Ղուիցերիա	2,38	23	77
Տանիմարգա	1,96	19,50	80,50
Յունաստան	2,09	18,75	81,25
Իռլանտա	1,70	18,25	81,75
Աւստրիա (բուն)	3,13	17,15	82,85
Պավիէրիա	3,09	15,90	84,10
Ռումանիա	2,65	15,30	84,70
Եւրոպական Տաճկաստան		14,35	85,65
Շուէտ	1,92	14	86
Հունգարիա		13,75	86,25
Նորվէկիա	1,73	12	88
Եւրոպական Ռուսիա	3,25	9,90	89,10
Ֆինլանտիա	2,90	6	94

Այս բաղադատական զուգադիր ցուցակէն կը տեսնուի, որ գրեթէ (բացի Սագսոնիայէ եւ Անգլիայէ) ամէն երկրի մէջ գիւղացիները՝ քաղաքացիներուն վրայ բազմամարդութեան կողմէ՝ մեծագոյն տեղը կը բռնեն: Մեր բնագաւառն ալ նոյն համեմատութիւնը ունենալու է, թէեւ այդ մասին որոշ վիճակագրութիւն մը չէ կազմուած, սակայն եւրոպական Տաճկաստանի հետ քաղաքատելով, կարող ենք նշանակել գիւղերու համար 87 բնակիչ եւ քաղաքներու համար 13:

Այս նոյն ցուցակը նաեւ շատ լաւ կերպով ցոյց կուտայ ճարտարարուեստի (հնէխաչրի) եւ երկրագործութեան աշխարհագրական բաժանումը: Սագսոնիա՝ Պելճիգայէ աւելի բազմահոծ այս փոքր երկիրը, որուն ճարտարարուեստ եւ գործունեայ ժողովուրդը այնքան նշանաւոր եղած է, մեծ գաղթականութիւններու հակառակ բազմանալով, գրեթէ մշակելու հող բնաւ չունի եւ այս պատճառով առանց վաճառականութեան եւ մեծ ճարտարարուեստի չպիտի կարողանար իր պէտքերուն գոհացում տալ. այս ժողովրդի մեծագոյն մասը 66,15% քաղաքացի է, մինչդեռ Ռուսաստանի լայնածաւալ երկիրները գիւղական ազգաբնակչութեան ամբողջութիւնը՝ 90 % կը կազմէ:

Բանաստեղծները եւ գրագէտները դաշտային ու գեջղուկ կեանքը երգած են ու կ'երգեն, փիլիսոփաները եւ բարոյագէտները երջանկաւէտ պարզութիւնը փառաւորելու պէտ-

քը անկէ ներշնչուած ու զգացած են. բժիշկները ամէն օր իրենց հարուստ ծուխերը մաքուր օդ մը ծծելու եւ մտքի հանդարտութիւն գտնելու համար գիւղ կը խրկեն: Եւ այլ եւս առանց նախապաշարուած ընդունինք թէ՛ դիւղաբնակութեան հրապոյրը եւ քաղցրութիւնները շինական կեանքին ճշմարիտ արտայայտութիւններն են:

Այս հիացողներուն մէջ սակայն քանիներ կա՞ն, որ իրենց կեանքը գեղջկականի փոխել պիտի ուզեն...

Մանաւանդ մեր մէջ՝ քանի՞ հատ վկայեալ երկրագործներ, բժիշկներ, փաստաբաններ եւ նոյն իսկ ուսեալ քահանաներ կան, որ գիւղացիին ցաւին ցաւակից լինելով, ապրած են անոնց մէջ, մեղմած են անոնց ցաւերը, դարմանած են անոնց վէրքերը, ուղղած են անոնց նախապաշարումները եւ յոռի վարքերն ու բարքերը, ցոյց տուած են անոնց երջանկութեան ճշմարիտ ճանապարհը... Գրեթէ բնաւ:

Պատմագէտը եւ առողջաբանը ասանկ լեզուի վարպետութեամբ մը՝ ինչ ուզելնին ամենէ աւելի լաւ գիտեն. եւ եթէ անցեալին համար՝ առաջինին տրուած էր հաստատել երկրագործ դասակարգին կրած թշուառութեանց հաշուեկշիռը, երկրորդին կը պատկանի փնտռել՝ թէ այսօր որո՞նք են այն պատճառները, որ բարոյականէն աւելի նիւթական տեսակէտով իրապէս ստորին վիճակի մը մէջ կը բռնեն զեռ գիւղացիները:

Տօքթ. Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ

## «ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», Ի ՏՊԱՐԱՆ

(ՄԻՍԱԲ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ)

Կը տպագրուին հայերէն, ֆրանսերէն եւ օտար լեզուներով արեւն սեռակ աշխատութիւններ.

Գրքեր, Հակդէսներ. — Առեւտրական եւ առօրեայ գործերու հարկաւոր քուղքեր, Շրջաբերական, Այցաֆարս, Նաւակներ (ամէն տեսակ), Հրաւիրագիր, եւ այլն:

ՉԱՓԱԻՈՒ ՓԻՆ — ՄԱՌՈՒՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Օտար երկիրներու յանձնարարութիւնները կանխիկ են Դիմել՝

B. MISSAC

4, Rue Ortolan — PARIS (V<sup>e</sup>)

## ԳԱՂՏԱՍԵՐ ՄԱԿԱԲՈՒԾԵՐ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Գաղտասեր մակաբուծերու պատճառաւ հողագործութիւնը ամէն տարի նշանակելի փլաններ կը կրէ, պատճառ մը՝ որ մեր մէջ գրեթէ անծանօթ է:

Երբեմն կարելի կ'ըլլայ ճարտարօրէն մաքառիլ այս վարակող մակաբուծերու դէմ, ուղղակի ազդող մասնաւոր դարմաններով, բայց երբեմն ալ, եւ շատ պարագաներու մէջ, ընդհանուր միջոցներ ձեռք կառնուին, բոյսերու դիմադրող ոյժը զօրացնելու, որով միայն կարելի կ'ըլլայ գաղտասերերու կենսունակութիւնը եւ ոյժը տկարացնել:

Այս վերջին միջոցը սա առաւելութիւնը ունի, որ ամէն մի հողագործ կրնայ ի կիր արկանել:

Կան միջավայրեր, ուր մակաբուծային սերմեր ինքնարեարար կը զարգանան եւ կը տարածուին, բայց եթէ ատոնց դէմ գործածուին հողագործական մէկ քանի միջոցներ, անոնց ոյժն ու գործունէութիւնը պիտի տկարանայ:

Աղէկ մշակուած եւ խնամուած հողերու վրայ՝ մակաբուծական հիւանդութիւնները նուազ վտանգաւոր են քան խոնաւ եւ գէշ մշակուած հողերու վրայ:

Խոնաւ հողերը ստորերկրեայ կորիներով չորցնելով եւ աչնան խորահերկեր կատարելով հիւանդութեան արդիւնքները կը տկարացուին: Աւելի ցանցառ ցաները՝ քան խիտերը, աւելի տողացաները քան սփռելով ցանուածները կ'արգիլեն հիւանդութեան երեւիլը, որովհետեւ օդը եւ լոյսը կրնան թափանցել բոյսերու միջեւ՝ ուժովցնել անոնք:

Աղբերու խելօք գործածութիւնը, բոյսերու պէտք եղած սնունդը լիովին մատակարարելով, կ'աւելցնէ անոնց կենսունակութիւնը, որով կրնան վարակող մակաբուծերու յարձակումներուն դիմադրել. ասոր հակառակ անբաւական

անունդ մը՝ կամ բորակածին մեծ քանակութեամբ պարունակող աղբերու չափազանց գործածութիւնը, որ աւելի տերեւներու դարգացման կը նպաստէ քան ծիղին, հիւանդութեան զարգացմանը նպաստաւոր հող մը կը պատրաստէ:

Յորենի արտերու վրայ աճած գէշ խոտերը՝ կը հրաւիրեն գալտասեր մակաբուծերը. այս վնասակար խոտերէն ոմանք ապաստանարան են շատ մը գաղտասերերու տեսակներու, որոնք կը յարձակին մշակուած բոյսերուն ալ:

Խնամուած եւ մաքուր արտերը նուազ ենթակայ են մակաբուծային հիւանդութեանց, քան այն դաշտերը որոնց վրայ գէշ խոտերը կը վիտան. ասոր համար կրկնաբար կամ հողաբիրով (չափա) հողակազդելը անհրաժեշտ է, որովհետեւ՝ թէ հողը կ'օգտտի թէ հիւանդութեան վնասակար արգիւնքներուն առջեւ կ'անուրի:

Միեւնոյն հողի վրայ, միեւնոյն բոյսի յաճախակի յաջորդելը բնական է վարակման վտանգը կ'աւելցնէ. վարակուած մշակութենէ մը հողին վրայ մնացած գաղտասեր մակաբուծերու սերմերը բաւական ժամանակ իրենց կենսունակութիւնը կը պահեն:

Փոխն ի փոխ եթէ մշակուին նոյն հողին վրայ զանազան տեսակի բոյսեր, հիւանդութեան վտանգը կը նուազի:

Առողջ եւ ընտիր սերմնացուններու գործածութիւնը, այսինքն ընտրուած եւ կամ մասնաւոր խնամքով առողջ հունձքերէ առնուած մակաբուծերը սպառելու համար դեղուած սերմնացունները աւելի լաւ ապահովութիւն մ'են հիւանդութեան չերեւնալուն. բայց ամէն պարագայ մէջ՝ պէտք չէ կարծել՝ որ բնաւ չի պիտի երեւի հիւանդութիւնը, որովհետեւ մակաբուծային հիւանդութիւնները հիւանդ սերմնացուններէ զատ ուրիշ պատճառներ ալ ունին, որոնց ալ պէտք է հոգ տանիլ՝ բոլորովին ապահովելու համար հունձքը:

ԲՕԼ ԺԷՐԷ

## Թ Ի Ի Պ Ե Ր Ք Ի Ի Լ Օ Ջ

(Խրոնկայիս, Ծիրայիս)

Մանչէսդրի Գօլէժի բրօֆ. պ. Տէլէրին կը գրէ. «հաստատելէ վերջը : Առաջին, Որ քիւպերֆիւրօզը շատ տարածուած է Մեծն-Բրիտանիոյ գուարին մէջ. Երկրորդ, որ թիւպերքիւլօզով վարակուած կենդանիներու կաթը հասարակութեան առողջութեանը համար մեծագոյն վտանգ մ'է. Երրորդ, որ հիւանդ կենդանիներու ներկայութիւնը նախիրին կամ հօտին մէջ վարակման աղբիւր մ'է. միջոցները ցոյց պիտի տամ՝ որոնցմով կարելի պիտի ըլլայ այս վտանգաւոր հիւանդութիւնը հալածել եւ վերջապէս ջնջել» :

Կ'ըսէ՝ «Ընդհանրապէս մտածուածին հակառակ՝ կայ միջոց մը, որով կարելի է մեր նախիրէն հեռացնել այս հիւանդութիւնը, հիմնուած հետեւեալ զիտողութեանց վրայ. երեք տարեկան չեղող կենդանիներէն շատ քիչերը կրնան վարակուած ըլլալ, այնպէս որ կրնան մորթուիլ եւ սպառուիլ, առանց ո՛ր եւ է վտանգի, հետեւաբար նախիրը ազատելու համար այս վտանգաւոր թշնամիին ձեռքէն, պէտք է մորթել երեք տարեկան չեղած բոլոր այն կենդանիները, որոնք կը կասկածուին քե վարակուած ես» :

«Երեք տարեկան հասակին մորթուողները մեծ վնաս մը չեն տար անասնաբոյժին. մինչդեռ երեքէն վերջը՝ վնասը կը մեծնայ՝ մասնաւորապէս 3-5 տարեքին մէջ, այս այն միջոցն է, որ կովը իբր կաթնտու ամենամեծ արժէքն ունի» :

«Իսկ, եթէ անասնաբոյժը փոխանակ երեք տարեկանէն վարերը մորթելու՝ աւելի տարիքոտներն ալ ջնջէ անասնաբոյժի մը խորհրդովն ու աջակցութեամբը, քիչ ծախքով եւ աւելի շուտով՝ այս սոսկալի հիւանդութենէն պիտի ազատէ իր գուարը» :

«Սակայն, եթէ անասնաբոյժը ուզէ աւելի օգտուիլ եւ շահիլ երեք տարեկանէն վեր եղող կենդանիներէն, ընտրութեամբ պէտք է մորթէ : Անոնք՝ որ հիւանդութեան բոլոր նշանները ցոյց կուտան եւ ծծերնին ալ հիւանդ է՝ պէտք է անմիջապէս մորթել. միւսները, որոնք դեռ լաւ պայմաններու մէջ կը գտնուին եւ հիւանդութիւնը իր վերջակէտին դեռ չէ հասած՝ պէտք է չեղօքացնել եւ առանձին յարմար շէնքերու մէջ տեղաւորել» :

«Մատղաչ եղներն ու կովերը պէտք է գիրցնել մորթելու համար, ծոցւորներու (յղի) ծնելուն սպասել, կամաց կամաց կաթը ցամքեցնել եւ վերջը գիրցնելով մորթել»:

«Հիւանդներու ծնած հորթերը բաժնել մայրերէն. ծծցնել հիւանդ կովերէ կթուած եւ նախապէս ամլացած (stérilisé) կաթով: Հիւանդներէ աւելցած կաթով կրնայ չինուել կարագ եւ պանիր, բայց կանխաւ կաթի սերը պէտք է ամլացնել միջբրոպները մեռցնելու համար»:

Անդլիացի գիտնականի տուած այս խորհուրդներէն կրնանք մինք ալ գործնական հետեւութիւններ հանել ի նպաստ մեր անասնաբուծութեան:

1) Անմիջապէս մորթել վարակուած եւ դեռ երեք տարեկան չեղած հիւանդ կենդանիները:

2) Մորթել երեք տարեկանէն վեր եղածները որոշ ժամանակամիջոցի մը մէջ. այս պայմանաժամը անհրաժեշտ է, որպէս զի անասնաբոյժը գիրացնելու կամ հորթը աւելու միջոցը ունենայ:

Կառավարութիւնները, եթէ փոքրիկ զոհաբերութեամբ մը, հողագործի կրելիք մնասը թեթեւցնեն, հիւանդութիւնը կը ջնջուի երկար չի տեւած:

Մեր երկրի դուարը, որ կազմուած է զուտ ասիական ցեղէ եւ անոր տեսակներէն՝ բոլորովին ենթակայ է այս ամենավտանգաւոր հիւանդութեան, այս խնդիրը կրնայ մեզ այնքան հետաքրքրել՝ որքան Անգլիացիները:

Այս դաղափարը կուտանք, որովհետեւ կը ճանչնանք հիւանդութեան պատճառած կոտորածները, որով երկրի նախիրը տարուէ տարի կը նուազի ի մնաս մեր հողագործութեան. մեր կառավարութեանց նիւթական մնասներու զուգընթաց կ'երթայ անդարմանելի կորուստ մ'ալ. մատաղ սերունդ մը տարեկան հողին կը յանձնուի վարակուած կենդանիներու կաթով սնուած ըլլալուն պատճառով:

Գ. Մ.

Ծանօթ. Խմբագր. — Երկու տարիներէ ի վեր թիւպիրբիւլօզէն հիւանդացած կենդանիներու միտը կ'ամլացնեն մասնաւոր մէթոտով մը Դրուա քաղաքին մէջ եւ յետոյ կը վաճառեն սովորական գնի կէտովը կամ քառորդովը. ամլացած միտը աներկիւղ կրնայ սպառուել:

Le Gérant: PAUL GERÉE

Imprimerie B. Missac, 4, rue Ortolan, Paris.

# Վ. ՎԵՐՄՕՐԵԼ

Վիլլֆրանշ (Րոն) Ֆրանսա

1900ի Յուլյանոստիանոսի Երկու մեծ մրցանակ

ԷՔԼԷՐ ԹԻՆ 1 ԿԱՐԿՈՒՏԱՐԳԵԼ

ՄԵՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՇՈՂ



ՊԱՐԶՈՒԹԻՒՆ, ՆՆԿՆՈՒՄ ԵՒ ՏՈՒՆՆԵՐ

## Մ Ղ Ե Ղ Ա Կ Ն Ե Ր

Ուղեցէք տեղեկութիւն

Կարկուտի դէմ ԿԱՐԿՈՒՏԱՐԳԵԼներ

ԷՔԼԷՐի վայրկենական Պուլյի Միլիոնի եւ

Պլաքրոզի դէմ:

Երաշխաւորութիւն ազդեցութեան, դիւրաւ գործածուելուն եւ խնայողութեան. 12 լծվարի համար մէկ ծրարը 1 ֆր. 75 : 24 ծրարը 42 ֆր.

Գրել

V. VERMOREL

Villefranche (Rhône)

France

CHARRUES A VAPEUR  
LOCOMOTIVES A VAPEUR  
COMIONS A VAPEUR  
TOMBERAUX ROUTIERES  
ROULEAUX DES RAUTE A VAPEUR

De construction parfaite et d'une solidité à toute épreuve,  
sont livrés à des prix excessivement réduits par

John Fowler et Cie.

Magdebourg

Allemagne

ՇՈԿԵՇԱՐԺ ԱՐՕՐՆԵՐ

ՊՈՂՈՏԱՆԵՐՈՒ ՇՈԿԵՇԱՐԺՆԵՐ

ՇՈԿԵՇԱՐԺ ՀՈՂԱՍԱՅԼԱԿՆԵՐ

ՇՈԿԵՇԱՐԺ ՑԱԾ ՍԱՅԼԱԿՆԵՐ

ՊՈՂՈՏԱՆԵՐՈՒ ՇՈԿԵՇԱՐԺ ԼՈՂՆԵՐ

Փորձուած տոկունութեամբ ու ընտիր շէնքով, կը ղրկուին ամենաաժան գներով Գերմանիոյ Մակտեյուրկի ժՕն ՖՕՎԼԷՐ Ընկերութեան կողմէն:

«ԳՈՒԹԱՆ»ը կը հրատարակուի առայժմ ամիսը անգամ մը: Բաժանորդագրութիւնն է՝ արտասահմանի համար՝ 12 Ֆր. Տաճկաստանի՝ 10 Ֆր. Ռուսիոյ 6 րուպլի, Ամերիկայի՝ 3 տոլար, Տաճկաստանի ուսուցիչներու եւ ուսանողներու (հաստատական վկայագրերով)՝ 6 Ֆրանք:

Մուտք ունի ամէն երկիր: Դիմել խմբագրութեան

K. MEDZADOURIAN

23, Rue de la Collégiale  
PARIS

## Ա.ԶԳ

Պատճառով մը՝ ԳՈՒԹԱՆԻ 4րդ թիւը 15—20 օրէն պիտի ղրկենք 7րդ թիւին հետ. մնացած 6 թիւերն ալ յաջորդաբար, որով մեր բաժանորդները ստացած պիտի ըլլան մինչեւ տարւոյս վերջը խոստացուած ԳՈՒԹԱՆԻ 12 թիւերը:

Կը յուսանք, որ ԳՈՒԹԱՆԻ համակրողներն ալ ի նըկատի կ'առնեն, որ մէկ հոգիի մը ոյժերէն վեր է հազարաւորներու պահանջներուն գոհացում տալ, առանց հաւաքական աջակցութեան, կը փութան գոնէ իրենց բաժնեգները ղրկել, որպէս զի մենք ուրիշ մտածում չունենանք. եթէ ոչ զարգացնել ԳՈՒԹԱՆԸ: